ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» հունիսի 2014թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 605-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Երևան համայնքի և «Էյ Ջի Դիվելըփմենթ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2014 թվականի հունիսի 4-ին կնքված «Գույքի նվիրաբերության նախնական» պայմանագիրը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրաբերություն ընդունել «Էյ Ջի Դիվելըփմենթ» փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Արգիշտիի փողոց 7/4 շենքի հ. 149 հասցեում գտնվող 71.6քմ մակերեսով պոմպակայանն իր սարքավորումներով՝ համաձայն հավելվածի։

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2014 թվականի հունիսի ---ի
N---Ա որոշման

Ց Ա Ն Կ

«Էյ Ջի Դիվիլըփմենթ» ՓԲԸ–ի կողմից Երևան համայնքին նվիրաբերվող Երևան քաղաքի Արգիշտի 7/4 հասցեի պոմպակայանի գույքի

Հ/Հ	Գույքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	Պոմպակայան	քառ.մ	71.6	175 000	12 530 000
2	Պոմպ Grundfos Hydro Multi-S G2CR 10-8	հատ	1	4 710 000	4 710 000
3	Ճնշումային բաք 500լ BHT500	հատ	1	234 000	234 000
4	Ճնշումային բաք 300լ BHT300	հատ	1	156 000	156 000
Ընդամենը					17 630 000

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է որպես Երևան համայնքի սեփականություն ընդունել «Էյ Ջի Դիվելըփմենթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Երևան համայնքին նվիրաբերված Երևան քաղաքի Արգիշտիի 7/4 հասցեում գտնվող 71.6քմ մակերեսով պոմպակայանն իր սարքավորումներով:

Գույքը հանձնվում է Երևան համայնքին նվիրաբերությամբ Արգիշտիի 7/4 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումն ապահովելու նպատակով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն, կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջացել կայացնելու համապատասխան ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևանի քաղաքապետի որոշման ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք ընդունելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ